Հաստատում եմ

Տնօրեն՝ Ն. Գասպարյան

«28» 08 2011թ.

Ուսանողների կարիքների վերհանման քաղաքականությունը և ընթացակարգերը

Ուսանողների կարիքների վերհանումը քոլեջում տարվող ուսումնադաստիարակչական կարևորագույն ուղղություններից է, որը հնարավոր է իրականացնել ներքոգրյալ գործառույթներում.

- Դասղեկական խորհրդի
- Որակի ներքին ապահովման
- Ուսումնական մասի
- Ուսանողական խորհրդի

Դասղեկական խորհրդի աշխատանքները կազմակերպվում և իրականացվում են մանկավարժական խորհրդի առաջին նիստով ամրագրված դասղեկական խորհրդի կողմից՝ հիմնականում ուսումնադաստիարակչական գծով տեղակալի ղեկավարությամբ որպես նախագահ: Խորհուրդն ունի իր քարտուղարը, որը կազմակերպում է նիստերը և կազմում արձանագրություններ, իսկ անդամները յուրաքանչյուր ուսումնական խմբին կցված դասղեկներն են, որոնք աշխատում են իրենց աշխատանքային և օրացույցային թեմատիկ պլաններով, շաբաթը մեկ անգամ կատարում դասղեկական խորհրդատվական ժամեր, կիսամյակը մեկ անգամ հրավիրում ծնողական ժողովներ, կազմակերպում տարբեր տեսակի միջոցառումներ, էքսկուրսիաներ, սակայն նրանց հիմնական պարտականությունը ուսանողների հաճախումներին, առաջադիմությանը հետևելն է, ծանոթանալ յուրաքանչյուր ուսանողի անհատական, բարոյահոգեբանական կերպարին, նրա ընդունելություններին,

կարողություններին, նախասիրություններին, ապրելակերպին, ֆինանսական դրությանը և այլն:

Սերտ կապը ուսանողների, ծնողների հետ, հոգատար վերաբերմունքը ուսանողների նկատմամբ տալիս է իր դրական արդյունքը և այս հարաբերություններում ինքնըստինքյան բացահայտվում են ուսանողների կարիքները, դրանց լուծման հնարավորություններն ու խոչընդոտները, որոնք դասղեկները պարբերաբար ներկայացնում են ուսումնական մաս:

ՈՆԱ կառույցը պարբերաբար անց է կացնում

1. Անանուն հարցումներ
2. Հանդիպումներ ֆոկուս խմբերում ընդգրկված ուսանողների հետ
3. Կիրառում փակ արկղեր /հաճախ միջոցառումներում/ ուր յուրաքանչյուր ուսանող կարող է ներկայացնել կարծիքներ, առաջարկություններ, բողոքներ, ինչպես նաև իր կարիքների վերաբերյալ տեղեկություններ, որոնք քննարկում են ՈՆԱԿ-ի հանձնաժողովներում և հնարավորինս ստանում իրենց լուծումները

Ուսումնական մաս- Ուսանողները սերտ կապի մեջ ուսումնական և պրակտիկայի մասի բաժնի վարիչների հետ, հատկապես իրենց ուս. խմբերի ավագների միջոցով, որը ամեն օր տեղեկություններ է տալիս բաժնի վարիչին խմբում ուսանողների հաճախումների, առաջադիմության, նախաձեռնությունների, մտահոգություններին և կարիքների վերաբերյալ, իսկ բաժնի վարիչները տնօրենի ուսումնական և դաստիարակչական գծով տեղակալների հետ՝ իրենց հերթին, անց են կացնում մշտադիտարկում և վերահսկողություն, որոնք նույնպես նպաստում են կարիքների բացահայտմանը:

Ուսանողական խորհուրդ յուրաքանչյուր խմբի ուսանողական խորհրդի նախագահ, որը քոլեջի ուս. խորհրդի անդամ է, հաճախ խորհրդի ուշադրությունն է սևեռում իր խմբի այս կամ այն ուսանողի կամ ուսանողների կարիքների վրա, որը ուս. խորհրդի նախագահը ներկայացնում է տնօրինությանը:

Քոլեջում ուսանողների աջակցության ուղղություններն են՝

- մասնագիտական աջակցություն,

- աջակցություն ուսումնառության ընթացքում,
- աջակցություն վարչական անձնակազմի կողմից,
- ուսումնառության ռեսուրսների ապահովում,
- կարիերայի զարգացմանն ուղղված աջակցություն:

Ուսումնական գործընթացի հետ կապված կարիքներն ուսանողը կարող է վերհանել նաև առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների (ամբիոնների) միջոցով, որի խնդիրն է աջակցել ուսանողին ուսումնառության ամբողջ ընթացքում, տանել մասնագիտության հետ կապված աշխատանքներ, ուսումնական տարում առաջացած հարցերի պարզաբանում և լուծումների որոնում:

Ուսումնական գործընթացների հետ կապված ավելի ընդհանրական կարիքներն ուսանողները կարող են վերհանել ղեկավար անձնակազմի միջոցով:

Ընդհանուր իրավունքների հետ կապված կարիքներն ուսանողը կարող է վերհանել ուսանողական խորհրդի միջոցով:

Կարիերայի զարգացման և ուսման շարունակման հետ կապված կարիքներն ուսանողները կարող են վերհանել կարիերայի զարգացման ստորաբաժանման միջոցով:

Քոլեջի ուսանողներն իրավունք ունեն արտահայտել իրենց կարիքները Քոլեջի գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ՝

- ուսումնական գործընթացի (դասավանդման որակ, ուսումնառության միջավայր, միջոցների ապահովվածություն, լաբորատորիաների առկայություն և հագեցվածություն),
- այլ ծառայությունների և գործընթացների (կարիերայի զարգացում, սոցիալական աջակցություն, ուսման շարունակություն և այլն):